



ԲԱՅ
ՕԼԻՄՊԻԱԴԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՅ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ
2022-2023

Մաթեմատիկա (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...


Կ. Գառու

Մաղթում ենք հաջողություն:

1. (4 միավոր) Համեմատել $\sqrt{2022} + \sqrt{2024}$ -ը և $2\sqrt{2023}$ -ը (հաշվիչից չօգտվել):


2. (4 միավոր) Հայտնի է, որ $\frac{a}{b+c-a} = \frac{b}{a+c-b} = \frac{c}{a+b-c}$: Գտնել $\frac{(a+b)(b+c)(c+a)}{abc}$ արտահայտության հնարավոր արժեքները:

3. (4 միավոր) Օգտվելով նկար 1-ում պատկերված $y = kx + b$ գծային ֆունկցիայի գրաֆիկից համեմատել $|k|$ -ն $|b|$ -ի հետ:



4. (4 միավոր) Գտնել այն ամենափոքր A բնական թիվը, որ $A \cdot 2022 \cdot 2023 + 9$ -ը լինի բնական թվի քառակուսի:

5. (4 միավոր) Հավասարակողմ եռանկյանը ներգծված են երկու իրար շոշափող շրջանագծեր (տես նկար 2-ը): Գտնել $\angle KLM$ -ը, որտեղ K , L և M կետերը շոշափման կետերն են:



Նկար 2